ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/20

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Լեյկո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Դ. Հովսեփյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Լեյկո» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 10.02.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

1. հանձնաժողովի 26.01.2022 թվականի հայտերի բացման և գնահատման նիստի (թիվ 4 արձանագրություն) որոշումը մասնակի նույն ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Զարտեր» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով դադարեցնելու վերաբերյալ որոշում,

2. պայմանագիր կնքելու որոշումը մասնակի նույն ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Զարտեր» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասով դադարեցնելու և գնման ընթացակարգը 10-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.02.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 14.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/20 համարի ծածկագիրը:

23.02.2022թ.-ին, 04.03.2022թ.-ին և 11.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 04.03.2022թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2022թ.-ին:

2. «Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լեյկո» ՍՊԸ-ն 10.02.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 10.01.2022թ.-ին հայտարարվել է «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Նույն ընթացակարգի գնման առարկաների ցանկում, ի թիվս այլնի, եղել է նաև «Ալկոգել 500մլ» (չափաբաժնի համարը թիվ 10), որն իրենից ներկայացնում է ախտահանիչ միջոց:

Վերոնշյալ չափաբաժնի համար գնային առաջարկ է ներկայացրել նաև բողոքաբեր «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն (այսուհետ Ընկերություն):

Հիշյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Միհրան Համբարձումյանի կողմից 21.01.2022թ.-ին էլեկտրոնային եղանակով ծանուցում է ստացվել առ այն, որ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր

մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա սույն թվականի հունվարի 26-ին ժամը 15:00-ին ք. Երևան, Նուբարաշեն 1/3 հասցեում: Հրավիրված բանակցություններին մասնակցել է նաև Ընկերության ներկայացուցիչը ներկայացնելով Ընկերության կողմից գնման ներկայացված ապրանքի (ալկոգելի) անվտանգությունը հաստատող փաստաթուղթը ««Լեյկոսեպտ» մաշկային հականեխիչ ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 06.10.2020թ.-ի թիվ 3494-Լ հրամանը, և գնային առաջարկը:

09.02.2022թ.-ին տեղեկագրում հրապարակվել են «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ գնահատող հանձնաժողով) նիստերի 17.01.2022թ.-ի թիվ 2, 21.01.2022թ.-ի թիվ 3 և 26.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրությունները, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որով անգործության ժամկետ է սահմանվել մինչև 12.02.2022թ.-ը ներառյալ:

Գնահատող հանձնաժողովի 26.01.2022թ.-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 4) «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Վան-Զարտեր» ՍՊԸ-ն, որը չէր ներկայացրել իր կողմից գնման ներկայացված ապրանքի (ալկոգելի) անվտանգությունը հաստատող փաստաթուղթ:

Վերորգրյալի հիման վրա ներկայացնում ենք սույն բողոքը ներքոնշյալ փաստական և իրավական հիմքերի ու պահանջի վերաբերյալ:

Ինչպես արդեն նշեցինք, «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ Ընթացակարգ) 10-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Վան-Զարտեր» ՍՊԸ-ն, որը չէր ներկայացրել իր կողմից գնման ներկայացված ապրանքի (ալկոգելի) անվտանգությունը հաստատող փաստաթուղթ: Հատկանշական է, որ «Վան-Զարտեր» ՍՊԸ-ին Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի 26.01.2022թ.-ի որոշումը (արձանագրություն թիվ 4) տեղեկագրում հրապարակվել է 09.02.2022թ.-ին:

Սույն բողոքով Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգային իմպերատիվ կանոնների պահպանվածության, ինչպես նաև «Վան-Զարտեր» ՍՊԸ-ին Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշման և դրանով

պայմանավորված վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշման իրավաչափության հարցերին:

Անդրադառնալով բարձրացված առաջին հարցին նշենք հետևյալը: ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 40-րդ կետի 5-րդ կետի համաձայն հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տփալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, (....):

Նույն հավելվածի 43-րդ կետի համաձայն հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ

մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 20-րդ կետերի հիման վրա կատարվող գնումների: Գնահատող հանձնաժողովի այն անդամները, ովքեր հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը:

Սույն գործով գնահատող հանձնաժողովի կողմից գումարվել է հայտերի բացման և գնահատման թվով 3 նիստ 17.01.2022թ.-ին (թիվ 2 արձանագրություն), 21.01.2022թ.-ին (թիվ 3 արձանագրություն) և 26.01.2022թ.-ին (թիվ 4 արձանագրություն): Առաջին երկու նիստերի ժամանակ որոշումներ են կայացվել դրանք կասեցնելու մասին մի դեպքում որոշ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխանեցնելու համար, մյուս դեպքում գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար նոր նիստ հրավիրելու նպատակով: Վերջին նիստը տեղի է ունեցել 26.01.2022թ.-ին, որի ժամանակ էլ հենց ավարտվել է հայտերի բացման և գնահատման գնահատող հանձնաժողովի նիստը: Սակայն, ի հեճուկս վերոնշյալ իմպերատիվ պահանջի առ այն, որ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում, սույն գործով գնահատող հանձնաժողովի 26.01.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությունը դրան նախորդած այլ նիստերի արձանագրությունների հետ մեկտեղ սահմանված ժամկետում, այսինքն ամենաուշը 27.01.2022թ.-ը ներառյալ, չի հրապարակվել տեղեկագրում, այլ հրապարակվել է միայն 09.02.2022թ.-ին, այն էլ ոչ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով (հրապարակվել են պատճեններից սկանավորված տարբերակները): Թույլ տրված խախտումներն ակնհայտորեն ստվերում են Ընթացակարգի շրջանակներում ընդունված որոշումների

իրավաչափությունը և անհրաժեշտաբար պետք է ստանան իրենց իրավական գնահատականը արտահայտված Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի 26.01.2022թ.-ի նիստի (թիվ 4 արձանագրություն) որոշումը դադարեցնելով և Ընթացակարգն այդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելով:

Վերոգրյալից բացի, նշենք նաև, որ Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Չարտեր» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի 26.01.2022թ.-ի նիստի (թիվ 4 արձանագրություն) որոշումն իրավաչափ չէ նաև ներքոնշյալ հիմքերով և պատճառաբանությամբ: Ընթացակարգի 10-րդ չափաբաժնով, որպես գնման առարկա, սահմանվել է «Ալկոգել 500մլ», որն իրենից ներկայացնում է ախտահանիչ միջոց:

ՀՀ օրենսդրությամբ և դրա մաս կազմող այլ իրավական ակտերով կարգավորվել են ախտահանիչ միջոցներին և դրանց շրջանառությանը վերաբերող պահանջները: Մասնավորապես, ՀՀ կառավարության 01.08.2019թ.-ի թիվ 1009-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դրված Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) հանձնաժողովի 28.05.2010թ.-ի թիվ 299 որոշման 2-րդ բաժնի կարգավորումների համաձայն ախտահանիչ, միջատասպան (դեզինսեկցիոն) և կրծողասպան (դեռատիզացիոն) միջոցների (կենցաղում, բուժական-պրոֆիլակտիկ հիմնարկություններում և այլ օբյեկտների համար կիրառելու նպատակով (բացի անասնաբուժության մեջ կիրառվող միջոցներից և ռեպելենտ միջոցներից, որոնք դասվում են արդյունաբերական արտադրության պայմաններում օգտագործվող կենսաբանական գործոնների (միջատների) ազդեցությունից անհատական պաշտպանության մաշկաբանական միջոցների դասին)) ներմուծումը և շրջանառությունն իրականացվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանին և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) անցկացման կարգի 17-րդ և 30-րդ կետերին համապատասխան դրանց անվտանգությունը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

ՀՀ առողջապահության նախարարի 10.09.2015թ.-իվ թիվ 48-Ն հրամանով հաստատված հավելվածի 20-րդ կետի համաձայն ախտահանման, մանրէազերծման, գործընթացներում օգտագործվող նոր ախտահանիչ նյութերը, բժշկական արտադրատեսակները, բժշկական տեխնիկան ունենում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված, անվտանգությունը հաստատող

փաստաթղթեր և մակնշում համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1009-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 3-ի թիվ 48-Ն հրամանի պահանջների:

ՀՀ առողջապահության նախարարի 07.05.2014թ.-ի թիվ 17-Ն հրամանով հաստատվել են «Ախտահանիչ, միջատասպան և կրծողասպան միջոցներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» N-2.1.7.006-14 սանիտարական կանոնները և նորմերը (տե ս նույն հրամանի հավելվածը, այսուհետ Հավելված): Հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվել է «Ախտահեմամե միջոցներ» հասկացությունը, այն է քիմիական և կենսաբանական միջոցներ, որոնք նախատեսված են ախտահանման (ախտահանիչ միջոցներ), նախամաերէազերծման, մաքրման, մանրէազերծման (մանրէազերծման միջոցներ), միջատասպան (միջատասպան միջոցներ), կրծողասպան (կրծողասպան միջոցներ) համար, ինչպես նաև վանող նյութեր (ռեպելենտներ) և ոջլասպան միջոցներ: Նույն Հավելվածի 3-7-րդ կետերով սահմանվել են ախտահանման միջոցներին ներկայացվող պահանջները, Հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է ախտահանիչ միջոցների ախտահանաբանական փորձաքննության իրականացման իմպերատիվ պահանջ, հաջորդիվ սահմանվել են ախտաբանական փորձաքննության սկզբունքները, այն եզրափակող փորձագիտական եզրակացությանը, ինչպես նաև ախտահանիչ միջոցների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջները (տե ս Հավելվածի 8-16-րդ կետերը):

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները (հետագայում՝ սանիտարական կանոններ) սահմանում են բնակչության համար շրջակա միջավայրի անվտանգության և ոչ վնասակարության չափանիշներն ու մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման պահանջները:

Սանիտարական կանոնների կատարումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար:

Ամբողջ վերոգրյալից հետևում է, որ ախտահանիչ միջոց հանդիսացող ալկոգելը կարող է շրջանառության մեջ դրվել, օգտագործվել բացառապես այն դեպքում, երբ ենթարկվել է ախտահանաբանական փորձաքննության, որով չեն արձանագրվել

բացասական արդյունքներ, երբ սահմանված կարգով փաթեթավորված և մակնշված է, երբ առկա է դրա անվտանգությունը հաստատող փաստաթուղթ: Ընդ որում, նշված պահանջներն իրենցից ներկայացնում են սանիտարական կանոններ, որոնց պահպանումը պարտադիր է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց համար: Ասվածը նշանակում է, որ այդ պահանջները պետք է հաշվի առնվեն նաև գնումների գործընթացում, այսինքն գնման առարկա կարող է լինել բացառապես այն ախտահանիչ միջոցը, որը համապատասխանում է վերոնշյալ պահանջներին, քանզի հակառակ պարագայում այն ձեռք բերող պատվիրատուն չի կարողանալու ապահովել վերոնշյալ իմպերատիվ պահանջները դրանից բխող բոլոր անշահավետ հետևանքներով հանդերձ: Նշվածը նշանակում է նաև, որ գնման ընթացակարգի կազմակերպիչը /պատվիրատուն/ չի կարող գնման ընթացակարգ հայտարարել հիշյալ պահանջներին չհամապատասխանող ախտահանիչ միջոցներ ձեռք բերելու համար կամ ձեռք բերել դրանք, հակառակ պարագայում ոչ միայն կխախտվեն հիշյալ իրավանորմերի պահանջները, այլև դրանց չհամապատասխանող ախտահանիչ միջոցների օգտագործումը կարող է հանգեցնել լրջագույն առողջապահական խնդիրների հաշվի առնելով դրանց ախտահանաբանական փորձաքննության ենթարկված չլինելը և դրանց անվտանգությունը հաստատող փաստաթուղթ չունենալը: Պարզից էլ պարզ է, որ պետությունը հիշյալ պահանջները սահմանել է նպատակ հետապնդելով ապահովելու մարդկանց առողջությունը, շրջակա միջավայրի անվտանգ լինելը, իսկ ախտահանիչ միջոցներ ձեռք բերելու գնման ընթացակարգ հայտարարած ցանկացած սուբյեկտ, որը հետագայում օգտագործելու է դրանք, պարզապես չի կարող հաշվի չառնել գնման ներկայացված ախտահանիչ միջոցների համապատասխանությունը վերոնշյալ իմպերատիվ պահանջներին:

Մինչդեռ նշենք, որ Ընթացակարգի շրջանակներում տեղի է ունեցել լրիվ հակառակը: «Լեյկո» ՍՊԸ-ն գնման է ներկայացրել «Լեյկոսեպտ» մաշկային հականեխիչ ախտահանիչ միջոցը, որն անցել է համապատասխան ախտահանաբանական փորձաքննություն, ունի անվտանգությունը հաստատող փաստաթուղթ ի դեմս ՀՀ առողջապահության նախարարի ««Լեյկոսեպտ» մաշկային հականեխիչ ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը հաստատելու մասին» 06.10.2020թ.-ի թիվ 3494-Լ հրամանի (կցվում է սույն բողոքին), սահմանված կարգով փաթեթավորված և մակնշված է, այսինքն համապատասխանել է օրենսդրությամբ սահմանված պահանջներին և որպես այդպիսին կարող էր ներկայացվել գնման: Սակայն Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից

ճանաչված «ՎԱՆ-ՉԱՐՏԵՐ» ՍՊԸ-ն գնման է ներկայացրել ախտահանիչ միջոց հանդիսացող ալկոգել, որի մասով առկա չէ որևէ ապացույց առ այն, որ այդ ալկոգելն անցել է ախտահանաբանական փորձաքննություն և ունի դրա անվտանգությունը հաստատող փաստաթուղթ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգ, սահմանված կարգով փաթեթավորված չէ: Հատկանշական է, որ նշված ընկերության ներկայացրած ալկոգելը շուկայականի համեմատ եղել է ավելի էժան, և որ ամենազարմանալի է, գնահատող հանձաժողովը, անտեսելով վերոնշյալ իմպերատիվ պահանջները, թույլատրելի է համարել նշված ալկոգելի գնման ներկայացումը և դեռ ավելին, որոշել է գնել հենց «ՎԱՆ-ՉԱՐՏԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած ալկոգելը: Այն, ինչ տեղի է ունեցել Ընթացակարգի շրջանակներում, վերոնշյալ իրավանորմերի կոպիտ խախտում է արտահայտված դրանց իմպերատիվ պահանջների անտեսմամբ: «ՎԱՆ-ՉԱՐՏԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած ալկոգելը չէր կարող գնվել Պատվիրատուի կողմից օրենսդրությամբ այդ ապրանքին ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու պատճառով, հետևաբար «ՎԱՆ-ՉԱՐՏԵՐ» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել ոչ իրավաչափորեն հիշյալ իրավական ակտերի պահանջների անտեսման պայմաններում, այլ կերպ ասած Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Չարտեր» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի 26.01.2022թ.-ի նիստի (թիվ 4 արձանագրություն) որոշումն իրավաչափ չէ և ենթակա է դադարեցման, ինչով պայմանավորված իրավաչափ չէ նաև Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Չարտեր» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը:

Ընդ որում, «Վան-Չարտեր» ՍՊԸ-ի ներկայացրած ալկոգելի հիշյալ իրավական ակտեի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ մեր գնահատականները ներկայացվում են ոչ միայն Ընկերության իրավունքների և օրինական պաշտպանության նկատառումներից ելնելով, այլ նաև առաջին հերթին կարևորելով հատկապես այդպիսի ապրանք ձեռք բերելու արդյունքում հնարավոր առողջապահական հետևանքները կանխելու անհրաժեշտությունը սույն բողոքի հիմքով Ընթակարգի 10-րդ չափաբաժնի մասով պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելով և չթույլ չտալով այդ ալկոգելի օգտագործումը պացիենտների 6 շրջանում, քանզի դրա անվտանգ լինելու մասով որևէ ապացույց առկա չէ և հաշվի առնելով ներկայիս համաճարակային իրավիճակը պայմանավորված նոր կորոնավիրուսային վարակի առկայությամբ:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Լեյկո» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

1. հանձնաժողովի 26.01.2022 թվականի հայտերի բացման և գնահատման նիստի (թիվ 4 արձանագրություն) որոշումը մասնակի նույն ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Զարտեր» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով դադարեցնելու վերաբերյալ որոշում,

2. պայմանագիր կնքելու որոշումը մասնակի նույն ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Զարտեր» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասով դադարեցնելու և գնման ընթացակարգը 10-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշում:

3. <u>«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 14.02.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/2549-2022 գրությամբ դիմել է «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 10.02.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 16.02.2022թ.-ին թիվ 255/22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր սույն թվականի փետրվարի 14-ի գրության ստորև ներկայացնում եմ «Հոգեկան առատության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» գնման ընթացակարգի 10-րդ չափաբաժնի համար «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի մասով դիրքորոշումը:

Տեղեկացնում եմք որ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» գնման ընթացակարգի բացումը տեղի է ունեցել սույն թվականի հունվարի 17-ին ժամը 10:00-ին: Գնման ընթացակարգի բացումից հետո որոշ մասնակիցների առաջարկվել է շտկել փաստաթղթերը, որոնք չեն համապատասխանել հրավերի պահանջներից, որոնք շտկվելուց հետո բոլոր

մասնակիցները հրավեիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակա բանակցությունների, որոնք տեղի են ունեցել սույն թվականի հունվարի 26-ին:

Հարկ եմ համարում նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ պարբերության պահանջների «բ հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին», իսկ համաձայն նույն որոշման 31-րդ կետի 21-րդ ենթակետի «հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասսն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ».

Տեղեկացնում եմ նաև, որ գնման ընթացակարգի հայտերի գնահատման ձգձգումը կամ ուշացումը կախված է նաև հիվանդանոցի աշխատանքային ծանրաբեռնվածությունից, ինչպես նաև հիվանդանոցում ներկայումս իրականացվող շինարարական աշխատանքների արդյունքում հաճախակի էլեկտրականության կամ համացանցի անջատումներն: Սակայն հարկ եմ համարում պնդել, որ գնահատումն իրականացվել է անաչառ, ոչ մի մասնակցի իրավունք չի ոտնահարվել:

Ինչ վերաբերում է այն պահանջին, որ ախտահանիչ միջոցը պետք է անցնի համապատասխան ախտահանաբանական փորձաքննություն և ունենա անվտանգությունը հավաստող փաստաթուղթ, տեղեկացնում եմ, որ նման պահանջ չի ներառվել նշված գնման ընթացակարգի 10-րդ չաւիաբաժնի տեխնիկական բնութագրում տեխնիկական վրիպակի պատճառով և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն կիսում է «Լեյկո» ՍՊԸ-ի առաջարկը առ այն, որ նշված գնման առարկայի մասով գնման ընթացակարգը պետը է հայտարարվի չկայացած:

Հարկ եմ համարում նշել. որ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՅԲ-22/06» գնման ընթացակարգի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել հիվանդանոցի կարիքների համար անհրաժեշտ բժշկական նշանակության ապրանքներ, որոնք անհրաժեշտ են վերջինիս բնականոն աշխատանքն ապահովելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները կիրառել միայն նշված գնման ընթացակարգի 10-րդ չափաբաժնի համար:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 10.01.2022թ.-ին հայտարարվել է «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ 10-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում «Ալկոգել 500մլ» ապրանքատեսակը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 24451141/503, իսկ որպես ապրանքի տեխնիկական բնութագիր սահմանվել է հետևյալը. «Ալկոհոլը պաշտպանում է ձեռքի հիգիենան բոլոր իրավիճակներում՝ ջրի կամ լվացող միջոցների բացակայության դեպքում: Էթիլային սպիրտ 72%, գլիցերին, ջուր:»:

iii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ի ժամը 10:00-ն ներառյալ:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 10-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել վեց /6/ մասնակից՝ այդ թվում նաև «Լեյկո» ՍՊԸ-ն և «Վան-Զարտեր» ՍՊԸ-ն:

v. «Վան-Զարտեր» ՍՊԸ-ն հյատով ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով (Հավելված 1.1) որպես 10-րդ չափաբաժնի համար նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է հետևյալը՝ «Ալկոհոլը պաշտպանում է ձեռքի հիգիենան բոլոր իրավիճակներում՝ ջրի կամ լվացող միջոցների բացակայության դեպքում: Էթիլային սպիրտ 72%, գլիցերին, ջուր:»:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.01.2022թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վան-Զարտեր» ՍՊԸ-ի կողմից 10-րդ չափաբաժնի մասով անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

vii. Հանձնաժողովի 21.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

viii. Հանձնաժողովի 26.01.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 10-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Վան-Զարտեր» ՍՊԸ-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 10.02.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 10.01.2022թ.-ին հայտարարված «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ 10-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում «Ալկոգել 500մլ» ապրանքատեսակը և որպես վերոնշյալ ապրանքի տեխնիկական բնութագիր սահմանվել է հետևյալը. «Ալկոհոլը պաշտպանում է ձեռքի հիգիենան բոլոր իրավիճակներում՝ ջրի կամ լվացող միջոցների բացակայության դեպքում: Էթիլային սպիրտ 72%, գլիցերին, ջուր:»: Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ի ժամը 10:00-ն ներառյալ: Հանձնաժողովի 17.01.2022թ.-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից 10-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է ապրանք, որի տեխնիկական բնութագրում ներկայացվել է «դենատուրացված էթանոլ 60%-70%», սակայն հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է «էթիլային սպիրտ 72%», ինչով պայմանավորված որոշում է կայացվել առաջարկել «Արմենֆարմ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Հանձնաժողովի 21.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը և հայտը գնահատվել է բավարար: Իսկ Հանձնաժողովի 26.01.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշում է կայացվել 10-րդ

չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Վան-Զարտեր» ՍՊԸ-ին: «Վան-Զարտեր» ՍՊԸ-ն հյատով ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով (Հավելված 1.1) որպես 10-րդ չափաբաժնի համար նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է հետևյալը՝ «Ալկոհոլը պաշտպանում է ձեռքի հիգիենան բոլոր իրավիճակներում՝ ջրի կամ լվացող միջոցների բացակայության դեպքում: Էթիլային սպիրտ 72%, գլիցերին, ջուր:»:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցը, ինչպես նաև «Վան-Զարտեր» ՍՊԸ-ի կողմից 10-րդ չափաբաժնի մասով ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1)՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Զարտեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի և գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերի միջև չկա որևէ անհամապատասխանություն /հակասություն/, ուստի Հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը բավարար գնահատելուս և ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումներն իրավաչափ են և ենթակա չեն դադարեցման:

Ինչ վերաբերում է Բողոքով ներկայացված այն փաստական հանգամանքներին, որ «Վան-Զարտեր» ՍՊԸ-ի կողմից 10-րդ չափաբաժնի մասով ներկայացրած առաջարկվող ապրանքը՝ ախտահանիչ միջոցը, համապատասխան ախտահանաբանական փորձաքննության չի ենթարկվել և չունի անվտանգությունը հավաստող փաստաթուղթ, ապա այս հանգամանքի վերաբերյալ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ նման պահանջ հրավերով սահմանված չի եղել, ըստ այդմ՝ այս փաստը ևս չի կարող մեկնաբանվել որպես մասնակցի կողմից ներկայացված ապրանքատեսակի ու գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերի միջև անհամապատասխանություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից ներկայացված՝ «ՀԱՊԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրությամբ՝ ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Վան-Զարտեր» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և նույն չափաբաժնի մասով

պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները դադարեցնելու պահանջների մասին «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով բողոքով ներկայացված՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված արձանագրություններն ուշ հրապարակելուն, Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Ընթացակարգի հրավերի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ին, իսկ Հանձնաժողովի կողմից «Վան-Զարտեր» ՍՊԸ-ի հայտն բավարար գնահատելու և վերջինիս 10-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումները կայացվել են Հանձնաժողովի 17.01.2022թ.-ի թիվ 2 և 26.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրություններով՝ տասն աշխատանքային օրվա՝ Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված պահանջների պահպանմամբ, ինչի արդյունքում, այս մասով նույնպես, «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 10.02.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/20 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**